

«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի
17.01.2012թ. թիվ 1/14Ա որոշմամբ «Ռեսո» ԱՓԲԸ գործադիր տնօրեն Սամվել
Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝
ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորող
իրավական ակտերի պահանջների խախտման համար:

17.01.2012թ.
Երևան

Թիվ 1/14Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ

«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից կազմված 2011 թվականի փետրվարի 21-ի թիվ 34/03 արձանագրությամբ արձանագրված խախտումները թույլ տալու համար «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սամվել Գրիգորյանին հայտարարել նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումներ չկրկնելու հանձնարարականով:
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից կազմված 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 34/06 և 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 34/10 արձանագրություններով արձանագրված խախտումները թույլ տալու համար «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սամվել Գրիգորյանի նկատմամբ կիրառել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումներ չկրկնելու հանձնարարականով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Ռեսո» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սամվել Գրիգորյանին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

- Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԸ՝ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ